ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԲԱՑԱՌԻԿ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ

Նյու Յորքի Կոլումբիա համալսարանի Հայկական կենտրոնի (*Armenian Center at Columbia University*) (հիմնված՝ 1979 թ.) և Նյու Յորք քաղաքի համալսարանի (ՆՅՔՀ, *City University of New York - CUNY)* Միջին Արևելքի և միջինարևելյան ամերիկյան կենտրոնի (ՄԱՄԱԱԿ, *Middle East and Middle Eastern American Center - MEMEAC)* (հիմնված՝ 2001 թ.) համագործակցությամբ 2004 թ. հոկտեմբերի 9-ին ՆՅՔ համալսարանի հիշյալ կենտրոնի Բեյսլի Փաուել Էլեբաշ ընդարձակ և բազմամարդ դահլիճում տեղի ունեցավ *«Հայերի մեկդարյա ներկայությունը Ամերիկայում. Նոր գիտնականների տեսակետներ»* **("A Century of Armenians in America: Voices from New Scholarship"***)* խորագրով մեկօրյա բացառիկ գիտաժողովը: Գիտաժողովի կազմակերպիչն էր հայտնի սոցիոլոգ, «Ամերիկահայերը. Հայ լինելուց դեպի հայ զգալը» *("The Armenian Americans. From Being to Feeling Armenian." New Brunswick, London, 1993)* արժեքավոր մենագրության հեղինակ, պրոֆեսոր Անի Բակալյանը, որին հաջողվել էր մեկտեղել ամերիկահայ ուսումնասիրությունների ասպարեզում հայտնի ավագ և նոր սերնդի հետազոտողներին:

Գիտաժողովին մասնակցող յոթ զեկուցողները վերջին տասնամյակում իրենց գիտական թեզերը պաշտպանած հետազոտողներ էին, որոնք մասնագիտացել էին Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ համայնքի պատմության, սոցիոլոգիայի, մարդաբանության, հոգեբանության, ընտելացման, ձուլման, ինքնության, համայնքային, ընկերային հաստատությունների, ընտանեկան հարցերի ասպարեզներում և եկել էին Հայաստանից, Մեծ Բրիտանիայից, Կալիֆոռնիայից, Օհայոյից, Նյու Ինգլընդից, Նյու Յորքից:

Ողջույնի բացման խոսքով հանդես եկան Կոլումբիա համալսարանի Հայկական կենտրոնի հոգաբարձուների խորհրդի նախագահ Մայքլ Հարությունյանը, ինչպես նաև ՄԱՄԱԱԿ-ի փոխտնօրեն, Կոլումբիա համալսարանի Խորհրդատվական կոմիտեի անդամ, պրոֆ. Անի Բակալյանը: Վերջինս առանձնահատուկ գնահատանքով անդրադարձավ ամերիկահայ ուսումնասիրությունների ասպարեզում իրենց ծանրակշիռ ավանդը ներդրած առաջնեկ հետազոտողներին՝ *«Բաժանված երկու երկրների միջև. Հայերը Ամերիկայում. 1890 մինչև Առաջին աշխարհամարտ»* (*"Torn Between Two Lands. Armenians in America, 1890 to World War I."* Cambridge, 1983) մենագրության հեղինակ, պրոֆեսոր Ռոբերտ Միրաքին և Սիրակուս համալսարանի հրատարակչության պատվավոր տնօրեն, «Ինչպես մեկ ընտանիք. Սիրակուսի հայերը» (*"Like One Family": The Armenians of Syracuse."* Ann Arbor, 2000) աշխատասիրության հեղինակ Արփենա Մեսրոպյանին, որոնք և գիտաժողովի պատվավոր համանախագահներն էին:

Մեկօրյա գիտաժողովն ունեցավ երեք նիստ, որտեղ համապատասխանաբար զեկուցեցին ամերիկահայության վերաբերյալ պատմագիտական, հոգեբանական և սոցիոլոգիական հետազոտություններ կատարած գիտնականները:

Առաջին նիստի խորագիրն էր՝ *«Առաջնեկները. Միացյալ Նահանգների վաղեմի հայ գաղթականները» (“The Pioneers: Early Armenian Immigrants to the United States”)*:

Այդ նիստում Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, *«Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (Սկզբնավորումից մինչև 1924 թ.)»* (*“The History of the Armenian Community of the United States of America (From the Beginning to 1924).”* Yerevan, 2000, in Armenian) գրքի հեղինակ, պատմական գիտությունների թեկնածու Քնարիկ Ավագյանը զեկուցեց «Հայերի գաղթը ԱՄՆ. Վկայություններ ըստ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի արխիվի» (“**The Emigration of the Armenians to the United States of America: Evidence from the Archives of the Armenian Patriarchate of Constantinople”)** թեմայով: Ներկայացնելով դեպի ԱՄՆ հայերի հոսքի և ամերիկահայ գաղութի ձևավորման պատմությունը՝ զեկուցողը նշեց, որ սկզբում, կրթական ու տնտեսական նախապայմաններից դրդված, պանդուխտ հայերի (ուսանող, առևտրական, արհեստավոր, հողամշակ, գործավոր) ժամանակավոր բնույթ կրող տեղաշարժը Օսմանյան Թուրքիայում հայության նկատմամբ գործադրված պարբերական ջարդերի և Մեծ եղեռնի (1894-1896 թթ., 1909 թ., 1915-1922 թթ.) հետևանքով վերածվել է զանգվածային գաղթի՝ ընդգրկելով տնտեսական, քաղաքական, մշակութային ու կրոնական ապահով կյանքի հեռանկարներից զրկված և հասարակական ու սեռատարիքային բոլոր շերտերը ներառող հայրենի բնօրրանի ողջ տարածքի տասնյակ հազարավոր հայերի: Թուրքիայի հայաբնակ շրջաններից և Արևմտահայաստանից ժամանակի ընթացքում ԱՄՆ մեկնած հայ գաղթականները մշտապես պահպանել են կապը հարազատ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքության հետ (թեպետ պաշտոնապես Ամերիկահայ թեմը Կ. Պոլսո Հայոց պատրիարքության վիճակն էր մինչև 1898 թ.)՝ այն համարելով իրենց հոգևոր, բարոյական ու գործնական մնայուն պատվար: Այդ մասին են վկայում Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի դիվանում մինչև օրս պահպանվող բացառիկ արժեք ու հետաքրքրություն ներկայացնող գաղթականական, հայապահպան-որբանպաստ, եկեղեցական, անձնական, հասարակական, քաղաքական բնույթի վավերագրերը (նամակներ, խնդրագրեր, փաստաթղթեր), որոնք ներառում են երկարատև մի ժամանակաշրջան՝ սկսած 1880-ական թվականներից մինչև մեր օրերը:

Լոս Անջելեսի Միավորված դպրոցական տարածաշրջանի ուսուցիչ, ներկայումս Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանի այցելու պրոֆեսոր, *«Կալիֆոռնիայի հայ գաղթական համայնքը. 1880-1935» (“The Armenian Immigrant Community of California: 1880-1935”)* ատենախոսության (2002) հեղինակ, դոկտոր Ջորջ Բայրըն Քուշյանն իր «Փասադենայի (Կալիֆոռնիա) հայ գաղթական համայնքը. Սկզբնավորումից մինչև 1960 թ.» **(“The Armenian Immigrant Community of Pasadena, California, from its Origins to 1960”)** զեկուցման մեջ, խոսելով 1920-ական թվականներից ձևավորվող «Փոքրիկ Հայաստանի»՝ Փասադենայի հայ համայնքի մասին, նշեց, որ այդտեղ առաջին հաստատվողները հիմնականում Հայոց ցեղասպանությունից վերապրածներն էին, որոնցում զգալի մաս էին կազմում հաճընցիները, ինչպես նաև ավետարանական հայերը: Առավելապես գործարարության (գորգի

վաճառականներ), գործավորության և կրթության ասպարեզում ներգրավված հայերն ազգային մշակույթը նոր սերնդին փոխանցելու նպատակով հիմնել են հայկական դասընթացներ և ընկերային ակումբներ: Թեև ամերիկածին սերունդը անգլիախոս է և նախընտրում է օտար ամուսնությունները, այդուհանդերձ, վերջին մի քանի տասնամյակների ընթացքում Մերձավոր Արևելքից և Հայաստանից սկսված արտահոսքը վերակենդանացրել է հայկական կյանքը Փասադենայում՝ հետազոտության նյութ ծառայելով ուսումնասիրողների համար:

Բրուքլինի Սբ. Ֆրենսիս կոլեջի դասախոս, Նյու Յորք քաղաքի համալսարանի դոկտորանտ, 1915-1955 թթ. հայության էթնիկ ինքնության դիմագծի փոփոխությունը ԱՄՆ-ում հարցի հետազոտող Բեն Ալեքսանդրն իր *«Երիտասարդությանը իրազեկելու միջոցները. Կուսակցությունները, մամուլը և երկրորդ սերունդը 1930-ական թվականներին»* **("Reaching Out to the Young: The Parties, the Press, and the Second Generation in the 1930s")** զեկուցման մեջ, հենվելով ժամանակի մամուլի հրապարակումների վրա, նշեց, որ հիշյալ թվականներին երիտասարդության հիմնական «շուկան» ամերիկյան տնտեսական և քաղաքական վայրիվերումների և հատկապես ԱՄՆ-ի հոգևոր առաջնորդ Դուրյան սրբազանի սպանությունից հետո ստեղծված բևեռացման պայմաններում գործող քաղաքական (Հայ Հեղափոխական Դաշնակցություն և Ռամկավար Ազատական) կուսակցություններն էին, որոնք իրենց հետևորդներին կոչ էին անում հայրենասեր ամերիկացիներ լինելու հետ մեկտեղ հայկական ազգային ժառանգության գիտակից հետևորդները լինել: Հայկական համայնքը երիտասարդությանը հրապուրիչ դարձնելու նպատակով կուսակցությունները կազմակերպում էին պարահանդեսներ, մարզական միջոցառումներ, հանրորեն խրախուսում երիտասարդության ձեռքբերումները և այլն: Զեկուցողի պատկերավոր արտահայտությամբ՝ «Լինել ամերիկահայ, կնշանակեր լինել հատուկ տիպի ամերիկացի»:

Երկրորդ նիստը կրում էր *«Հոգեբանական հարցեր. Բարեհաջող ընտելացում և հանձնառություն» ("Psychological Issues: Successful Adaptation and Legacy")* խորագիրը:

Օհայո համալսարանի Առողջապահության և մարդկության ծառայությունների դպրոցի Մանկան և ընտանեկան հարցերով պրոֆեսորի օգնական, դոկտոր Մարգարիտ Մանուկյանը զեկուցեց «*Կապակցելով սերունդները. Հայ մեծ մայրերի ընտանեկան հանձնառությունը»* **("Linking Generations: The Family Legacies of Older Armenian Mothers")** թեմայով: Նրա ատենախոսությունը (2001) ևս նվիրված էր այս հարցին: Սան Ֆրանցիսկոյի տարածաշրջանի 58-91 տարեկան մոտավորապես 30 կանանց շրջանում անցկացրած իր անձնական հարցումների նպատակն է եղել պարզել հետևյալը. նախ՝ որքանով են տարեց մայրերը փոխանցում ընտանիքի, պատմության և մշակույթի գիտակցությունը հաջորդ սերնդին, և որքանո՞վ են առանձին էթնիկ պատմությունները ազդում տարեց մայրերի կողմից ընտանիքի, պատմության և մշակույթի գիտակցության փոխանցմանը հաջորդ սերնդին: Լինելով գերմանացի մոր և հայ հոր զավակ՝ զեկուցողն իր անձնական փորձառությամբ նշեց, որ թեպետ մայրական կողմից ժառանգություն է ստացել նույնիսկ շուրջ մեկդարյա պատմություն ունեցող նյութական մշակույթի նմուշներ, սակայն հայրական կողմից ոչ մի նյութական շոշափելի արժեք չունի պահպանված: Համե-

մատելով նաև հարցման ենթարկված տարեց կանանց փորձառությունները՝ հետազոտողը եզրակացրեց, որ հայերը, հատկապես տարեց կանայք, հակված են հաջորդ սերունդներին փոխանցելու իրենց ազգային հոգևոր ժառանգության նմուշները (կերակրատեսակների և խմորեղենների բաղադրատոմսեր, երգեր, պատմություններ, հուշեր, լուսանկարներ): Եվ քանի որ ամերիկահայ իրականության մեջ ազգային ինքնություն փոխանցողները հիմնականում կանայք են, նրանք են պատասխանատու ընտանիքի անդամներին մեկտեղելու, հայկական կերակրատեսակներ պատրաստելու, թոռնիկների ազգային մշակութային-կրրթական դաստիարակություն ստանալու, հայ ավանդական տոնակատարություններ կազմակերպելու և նմանատիպ այլ հարցերի համար, ուստի և «հայրենիք» (“*Fatherland*”) հասկացությունն ամերիկահայ ընկալմամբ անգլերենից թարգմանվում է որպես «մայրենիք» (“*Motherland”):*

Նյու Յորքում մասնավոր գործառնությամբ կլինիկական հոգեբան, դոկտոր Դիանա Վարդանի զեկուցման թեման էր՝ *«Ապամշակութացման հոգեբանական ազդեցությունը Միացյալ Նահանգների հայության վրա»* **(“Psychological Impact of Acculturation on Armenians Living in the United States”)**: Այս հարցին էր նվիրված նաև նրա ատենախոսությունը (1996): Նա Իրանից, նախկին Խորհրդային Հայաստանից և Միջին Արևելքից եկած և Լոս Անջելեսում բնակություն հաստատած 220 հայերի շրջանում անցկացրած անձնական հարցումների արդյունքների հիման վրա եզրակացրեց, որ ընդհանուր առմամբ այդ գաղթականները հարմարվում են ԱՄՆ-ի կյանքին: Ընդ որում, շուկային համապատասխանող բարձր հմտություններ ունեցող և անգլերենին լավ տիրապետող հարցվողներն ինքնագնահատման բարձր և ընկճվածության (դեպրեսիա) նվազ զգացողություն ունեն: Մասնավորապես, Միջին Արևելքից եկած հայերը Սփյուռքում ապրելու իրենց անձնական փորձառության շնորհիվ ամերիկյան նոր միջավայրին հարմարվելու ամենից բարձր ցուցանիշներն ունեն: Զեկուցողն անդրադարձավ նաև ընկերային կյանքում դժվարություններ ունեցողների տարիքային տարբեր շերտերի խնդիրներին՝ առանձնապես ընդգծելով հայերի շրջանում բացատրական աշխատանքներ անցկացնելու անհրաժեշտությունը, որպեսզի մարդիկ չխուսափեն հոգեբանին այցելելուց, քանի որ այլ հիվանդությունների նման ընկճվածությունը ևս ախտ է և կարիք ունի մասնագետի օգնության:

Երրորդ բաժինը վերնագրված էր *«Սերնդային փոփոխություններ. Զուլում և ինքնություն» (“Generational Changes: Assimilation and Identity”)*:

Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանի Հանրային առողջապահության ատամնաբուժության և Առողջապահական գիտությունների Հարավային Կալիֆոռնիա համալսարանի վիճակագրական կոնսուլտանտ, *«Իրանգելես. Իրանահայերը Լոս Անջելեսում» (“Irangeles. Iranians in Los Angeles.” Ed.: Ron Kelley. Berkeley, 1993)* և *«Էթնիկ Լոս Անջելես» (“Ethnic Los Angeles.” Eds.: Roger Waldinger and Mehdi Bozorgmehr. New York, 1996)* ժողովածուներում առանձին բաժինների համահեղինակ, դոկտոր Կլաուդիա Տեր-Մարտիրոսյանը քննության էր ենթարկել «*Հայերը ԱՄՆ-ի մարդահամարում. 1980, 1990, 2000*» **(“Armenians in the U. S. Census: 1980, 1990, 2000”)** հարցը, որը ներկայացրեց ՄԱՄԱԱԿ հիմնադիր համատնօրեն,

պրոֆեսոր Մեհդի Բոզորգմեհրը: Նշվեց, որ ԱՄՆ-ում հայկական ծագմամբ բնակչության թիվը դժվար է որոշել: Ընդունված է համարել, որ նրանց թիվը տատանվում է ութ հարյուր հազարից մինչև ավելի քան մեկ միլիոն: Այս ուղղությամբ կարևոր աղբյուր կարող է ծառայել ԱՄՆ վիճակագրությունը, որը ազատ և մատչելի ներկայացված է Ինտերնետում, սակայն որը միշտ չէ որ հետազոտողների պատշաճ ուշադրությանն է արժանանում: Անցած երեք տասնամյակների ընթացքում (1980, 1990, 2000) ամերիկացիների շրջանում երկար հարցարաններով պատահական հարցումներ են արվել նրանց նախնիների կամ էթնիկ ծագման մասին: Մինչդեռ հարկ է, որ հայերը էթնիկ պատկանելության նշումի տակ արձանագրվեն ոչ միայն որպես այս կամ այն երկրից եկած, այլ նաև որպես հայ: Անհրաժեշտ է մարդահամար կամ հարցախույզ անցկացնել՝ պարզելու համար ներկայումս ԱՄՆ-ում բնակվող հայերի, ներառյալ՝ օտար ամուսնությունների հետևանքով կես կամ քառորդ պատկանելության հայերի իրական թիվը: Մինչ այժմ իրականացված հարցումները գաղափար են տալիս երկրում հայերի մոտավոր թվի և ժողովրդագրական ու գաղթականության հետ առնչվող այլ հարցերի մասին և թույլ են տալիս եզրակացնել, որ քննվող ժամանակահատվածում ԱՄՆ-ի հայերի զգալի մասը քաղաքական դրդապատճառներով Թուրքիայից, Հայաստանից, Լիբանանից և Իրանից գաղթածներն են, որոնք էլ նպաստել են բնակչության աճին: Ընդ որում, Հայաստանից և Լիբանանից եկածների շրջանում նկատվում է ինչպես անգլերենի իմացության պակաս, նույնպես և կրթական բարձր մակարդակ, իսկ Թուրքիայից եկածների շրջանում մեծ է սեփական գործ բացելու գործառույթը: Ընդհանուր առմամբ, եզրակացրեց զեկուցողը, հայերը բարեկեցիկ են:

Ֆրեզնոյի Կալիֆոռնիա պետական համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսորի օգնական, *«Ձուլում և ազգություն. Ադապտացիոն կաղապարները և էթնիկ ինքնությունը կենտրոնական Կալիֆոռնիայի ամերիկահայերի շրջանում» (“Assi-milation and Ethnicity: Adaptation Patterns and Ethnic Identity among Armenian-Americans in Central California”)* ատենախոսության (2001) հեղինակ, դոկտոր Մեթյու Արի Ջենդյանն իր *«Հայ լինել, թե չլինել. մշակութային պահպանում, ձուլում, և էթնիկ ինքնության հեռանկարներն ամերիկահայ չորս սերունդների շրջանում»* **(“To Be or Not to Be Armenian: Cultural Retention, Assimilation, and Perspectives on Ethnic Identity among Four Generations of Armenian-Americans”)** զեկուցման մեջ ներկայացրեց Կալիֆոռնիայի Սեն Ժոակին Հովտի երրորդ և չորրորդ սերնդի հայերի, այն է՝ հայ «լինել, թե չլինելու» օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով պարտադրված երկընտրանքն ունեցող սերնդի շրջանում իր անցկացրած հետազոտությունների արդյունքները: Զեկուցողը, ևս լինելով երրորդ սերնդի հայ, նշեց, որ հայ ինքնությունը ճկուն հատկանիշ է և ունի սոցիալական կառուցվածք: Այն փոփոխության է ենթարկվում կյանքի ընթացքում և կրում է սոցիալ-հոգեբանական գործոնների, սոցիալական ենթատեքստերի կամ հանգամանքների ազդեցությունը: Զեկուցողը եզրակացրեց, որ ազգային ինքնությունը կապված չէ անհատի կենսաբանական կառուցվածքից և գոյատևում է չորս սերունդների ընթացքում՝ էական փոփո-

խության ենթարկվելով առաջինից երկրորդ սերնդին անցման ընթացքում: Իսկ ձուլումը բազմակողմանի գործընթաց է, որն ընդգրկում է մշակութային, կառուցվածքային և ինքնության բաղադրիչներ:

Երեք նստաշրջաններից յուրաքանչյուրում լսված զեկուցումներն ամփոփեցին համապատասխանաբար Ֆրեզնոյի Կալիֆոռնիա համալսարանի Պատմության բաժնի Արդի հայոց և գաղթականության պատմության պրոֆեսոր, Կանադայի հայերի վերաբերյալ՝ *«Մեր լեռների նման. Կանադայի հայերի պատմությունը»* (*"Like Our Mountains: A History of Armenians in Canada."* McGill, 2004) աշխատության հեղինակ Իզաբել Գաբրիելյան-Չերչիլը, Հարավային Կալիֆոռնիայի Լա Վեռն համալսարանի Հոգեբանության ամբիոնի աշխատակից և Ստրատեգիական պլանավորման և արդյունքների գնահատման գծով Արվեստների և գիտությանց քոլեջի դեկանի օգնական, սոցիալ-հոգեբանության պրոֆեսոր Հակոբ Տեր-Կարապետյանը և Լոնդոնի համալսարանական քոլեջի ավագ հետազոտող, Մեծ Բրիտանիայի հայ համայնքի պատմության մասին՝ *«Հավատ պատմության հանդեպ. Հայերը վերակառուցում են համայնքը»* (*"Faith in History – Armenians Rebuilding Community."* London, 1997) գրքի հեղինակ Սյուզան Պատին:

Ամփոփիչ ելույթով հանդես եկավ Ուեսլեյան համալսարանի Անգլիական բաժնի Համեմատական գրականության ամբիոնի դասախոս, դոկտոր, պրոֆեսոր Խաչիկ Թոլոլյանը, որը, որպես *«Սփյուռք. Միջազգային ուսումնասիրությունների հանդես»* (*"Diaspora: A Journal of Transnational Studies."* Toronto, լույս է տեսնում 1992-ից) մրցանակակիր պարբերականի խմբագիր, անդրադարձավ այս ինքնատիպ գիտաժողովի գիտագործնական նշանակությանը՝ մեջբերելով հայտնի փիլիսոփա Ջոն Լոկի խոսքերը. «Ծննդից մինչև մահ հիշողությունն է, որ ստեղծում է ինքնություն, լինի դա սեռային, ազգային, թե դասակարգային»:

Գիտաժողովի անցկացումը մեծապես հնարավոր եղավ շնորհիվ Կոլումբիա համալսարանի Հայկական կենտրոնի հիմնադիրներ, հանգուցյալ դոկտորներ Նիկիտ և Էլեոնոր Օրջանյանների, որոնց և մի շարք այլ բարերարների նվիրատվություններով հաստատված հիմնադրամի շնորհիվ ավելի քան մեկ տասնամյակ հայագիտական հաջող ձեռնարկներ են իրականացվում:

Գիտաժողովի նպատակն էր ԱՄՆ-ում ավելի քան մեկդարյա գոյություն պահպանող ազգային-համայնքային հաստատությունների հոբելյանի առիթով լայն հասարակությանը ներկայացնել այս ասպարեզում երիտասարդ հետազոտողների կատարած ուսումնասիրությունները և խթանել նորերի ի հայտ գալուն, քանի որ ամերիկահայ հետազոտություններն իրենց ուրույն տեղն ունեն ինչպես հայագիտության, մասնավորապես սփյուռքագիտության, նույնպես և Միացյալ Նահանգների և այլ երկրների էթնիկ խմբերի ուսումնասիրությունների ոլորտում:

Գիտաժողովի նյութերը կտպագրվեն խմբագրված հատորում:

ՖԼՈՐԵՆՍ ԱՎԱԳՅԱՆ
ԶԱՐՄԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ